տալ որեւէ երկրի առանց համապատասխան ե-բաշխիքի։ Իսկ ինչ վերաբերւում է Դաշնակիցների մասնաւոր դրամագլուխների հոսանքին, քանի որ ձեզ մօտ գոյութիւն ունի համայնացում, Դաշնակիցների մասնաւոր դրամագլուխները այստեղ չեն կարող դալ»։

ԺՈՐՏԱՆԻԱ. «Արդիւնաբերութիւնն ու առեւտրական ձեռնարկները համայնացման ենթակայ չեն։ Այդպէս բան չկայ մեզ մօտ»։

ԶՕՐ. ՈՒՕԿԿԵՐ. «Մենք հաստատ վստահութիւն չունինք այդ բանում»։

ԺՈՐՏԱՆԻԱ. «Պէտք է ունենալ, այլապէս մենք կը լինէինք բոլշեւիկներ եւ ոչ Վրաստան։ Դուք, անգլիացիներդ ունիք Նոր-Զելանդիա դաղութը, նա ամբողջապէս համայնացուած է, իսկ մեզ մօտ համայնացման ենթարկուել են միայն խոշոր կալուածներն ու անտառները։ Վրաստանը հարուստ է թէ հանքերով եւ թէ երկրի երեսով, բայց առանց Դաշնակիցների դրամագլխի մենք չենք կարողանայ շահագործել այդ հարստութիւնները։ Մենք չենք ուզում, որ մեզ մօտ ուղղուին ուրիշ պետութիւնների դրամագլուխները, որ, ի հարկէ, կարող է կատարուել»։

ԶՕՐ. ՈՒՕԿԿԵՐ. «Հնարաւոր է»։

ԺՈՐՏԱՆԻԱ. «Ես կ'ուզէի դիտենալ, թէ ի՞նչ է մտածում զօրավարը Արտահանի դաւառի մասին։ Մենք դուրս կը քշենք Ախալցխայի դաւառից Աթարէգովի հրոսախմբերը, բայց արդեօք զօրավարը պատրաստո՞ւմ է անգլիական պահակներ դնել Վրաստանի սահմանից մինչեւ այն գիծը, որը Թուրքերի գնալուց յետոյ բռնել են անգլիացիները»։

ԶՕՐ. ՈՒՕԿԿԵՐ. «Ես այս պահուն Ախալցխայի դաւառն եմ ուղարկել անգլիական զօրամասեր, իսկ այնտեղից, երեւի, ուրիշ տեղեր էլ կ'ուղարկեմ անգլիական պահակախմբեր։ Բայց Վրաստանի կառավարութիւնը կարո՞ղ է կարգն ապահովել իր ներքին սահմաններում։

ԺՈՐՏԱՆԻԱ. «Ի հարկէ, Վրաստանի սահմաններում կարգը երբեք չի խանգարուի, եթէ արկածախնդրութիւններ չլինին Արտահանի կողմից, Աթարէգովի վերջին յարձակման պէս»։

* * *

Շատ երկար եղաւ այս մէջբերումը, բայց ես ամբողջապէս առաջ բերի Ուօկկեր-Ժորտանիա խօսակցութեան արձանագրութիւնը, որովհետեւ չափից աւելի յատկանշական ու վրացի գործիչներին բնորոշող վաւերագիր է նա։

Դեռ մի քանի ամիս առաջ վրաց հանրապետութեան վարիչները կաշուից դուրս էին գալիս ցուցադրելու համար իրենց գերմանասիրական զգացմունքները։ Թիֆլիսում այն ժամանակ գերման զօրավարներն էին նստած։ Դեռ նրանց գերմանասիրական հողաթափերը չմաշած՝ Թիֆլիս եկան անգլիացի զօրավարները, եւ ահա դուրս է գալիս, որ 25 տարի է Նոյ Ժորտանիայի «պետական ու հրապարակախօսական ամբողջ գործունէութիւնը ուղղուած է եղել Անգլիայի ու Ֆրանսայի կողմը», իսկ Ե. Գեգեչկորին հօ «միշտ եղել է անկեղծ կողմնակից Դաշնակից պետութիւնների»։ Դժբախտաբար, իտալական զօրավարներն էլ չեկան Թիֆլիս, որպէսզի առիթ ունենային լսելու իտալասիրական մեղեդիներ էլ։ Իրօք որ, ճարպիկ մարդիկ են վրացի մենշեւիկները...

Յետոյ, առանձնութեան մէջ, գլուխ գլխի տեղի ունեցած խօսակցութեան միջոցին Ժորտանիան պէտք չի զգում ծածկելու իր իսկական մտածումները. նա խօսում է Հայաստանի դաւադիր յարձակման մասին, մինչ փաստերը ցոյց են տալիս — եւ Ժորտանիաներն էլ շատ լաւ գիտեն — **որ հայ-վրացական պատերազմի սկզբնապատճառը** վրաց մենշեւիկների եսական աշխարհակալ քաղաքականութիւնն էր։

Ժորտանիան շատ պերճախօս կերպով խօսում է Թուրքերի Վրաստանի դէմ ցոյց տուած թշնամական **գործունէութեան** մասին։ Ն փաստերով զինուած՝ պնդում է, որ Թուրք ասկեարներն են ու սպաները Արտահանի ու Արդուինի կողմից Վրաստանի վրայ յարձակողը, Թուրք գործակալներն են, որ Բաթումում վրացիների դէմ գաղտնի դաւեր են լարում։ 1919 թուին Ժորտանիան այդ ամէնը գիտէր, եւ, սակայն, այսօր նոյն Ժորտանիան սպասում է, որ Թուրքերը կ'օգնեն Վրաստանի անկախութեան վերականգնման։

Հետաքրքրական են եւ զօր. Ուօկկերի տուած մոայլ տեղեկութիւնները Վրաստանի ներքին գործերի, բանակի, երկաթուղու վի-